

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԱՔՐՈՎՅԱՆԻ ԹԻՖԼԻՍՅԱՆ ԴՈՐՄՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Վ. Ջ. ՂԱԶԱՐՅԱՆ

Արքովյանի համար Թիֆլիսյան շրջանը առանձնահատուկ նշանակություն է ունեցել: Այս ժամանակահատվածում է նա սկսել իր մանկավարժական, դիտական ու հասարակական գործունեությունը, ստեղծել իր գեղարվեստական ստեղծագործությունների մեծ մասը և, վերջապես, գրել անմահ «Վերք Հայաստանին»: Այս առումով Արքովյանի կյանքի Թիֆլիսյան շրջանի ճիշտ լուսաբանումն ու գնահատումը կարևոր նշանակություն է ստանում նրա գործունեության արժեքավորման համար:

ՍՍՀՄ և Վրացական ՍՍՀ պետական պատմական կենտրոնական արխիվների մի շարք նոր վավերագրերը յուրահատուկ բանալի են մեծ դեմոկրատի մասին վաղուց տպագրված նյութերը նոր տեսակետով մեկնաբանելու համար:

Որ Արքովյանը Թիֆլիսում հարկադրաբար և ոչ թե կամովին է մնացել, ապացուցվում է իր իսկ վկայություններով: Նա Դորպատից Թիֆլիս է հասել 1836 թ. ամռանը: Այդ նույն ժամանակ հայրենիք մեկնող իր բարեկամներից մեկին նվիրած բանաստեղծության մեջ Արքովյանը երանի է տալիս ու տենչում.

Երբ արդեօք և ինձ լինիցի
Հանգչիլ ի ծոց նորա սիրուն¹:

Բանաստեղծությանը կից նամակում Արքովյանը ցավում է, թե ինչու ինքը հայրենիքում չէ, որ այդ բանաստեղծությամբ այնտեղ բարեկամին դիմավորեր, այլ ստիպված Թիֆլիսից է ուղարկում: Նույն նամակում էլ նա հայտնում է, որ պաշտոնի բերումով հանձն առած բազմաթիվ դժբախտություններ ու հոգսեր կապել-կաշկանդել են իր ոտքերն ու ձեռքերը և թույլ չեն տալիս իրագործել իր առջև դրած նպատակները:

Այնուհետև, 1839 թ. հունիսի 1-ին Ուվարովին ուղղած նամակում Արքովյանը գրում է, որ Դորպատի համալսարանն «ավարտելուց հետո ուղարկվեցի Վրաստան»², իսկ 1843 թ. Ս. Նաղարյանին գրած նամակում նա զանգատվել է. «Յոթ տարի մնացի կապված կաշկանդված Տփղիսում»³:

¹ Խ. Արքովյան, Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԺ), հատ. 1, էջ 157:

² Նույն տեղում, հատ. 10, էջ 224 (226):

³ Նույն տեղում, էջ 261: «Դիվան Խ. Արքովյանի», հատ. 1, Երևան, 1940, էջ 80 (այսուհետև՝ «Դիվան»):

Թվում է, թե այս ամենը բավարար հիմք է տալիս եղրակացնելու, որ Աբովյանը Թիֆլիսում է մնացել կառավարության հարկադրանքով և ոչ թե կաթողիկոս Հովհաննես Կարբեցու անբարյացակամության պատճառով, ինչպես մինչև այժմ պնդում են։ Ընդհակառակը, փաստերը վկայում են, որ կաթողիկոսը երկու անգամ Աբովյանին Հայաստան է հրավիրել և մնացել անպատասխան⁴։

Հարկադրաբար մնալով Թիֆլիսում, հաջորդ տարվա փետրվարի 12-ին Աբովյանն ափսոսանքի դառն զգացումով պետական ծառայության է անցել։ «Պետք է որ ես ըստ այնմ պետական ծառայությանմբ իմ ապրուստն հոգամ, որպիսի՝ ապագա ինձ համար»⁵, — գրել է նա։

Սակայն Աբովյանին մխիթարել է այն հանգամանքը, որ պետական ծառայության հենց առաջին օրերից նա հայ երեխաների համար, առանց իշխանությունների թույլտվության, բացել է նաև մասնավոր պանսիոն։ Վերջին հանգամանքին լավատեղյակ Պարրոտը իր նամակում Աբովյանին գրել է. «Խնդրում եմ հաղորդեցեք ձեր դպրոցների արժանավոր պարոն վերատեսչին իմ խոնարհագին և ամենաջերմ ողջույնները։ Նույնպես սրտանց խնդրում եմ, որ նա շարունակի վերաբերվել ձեր բախտին սիրով և գիշողաբար»⁶։

Պարրոտի վերջին արտահայտությունը ոչ մի կասկած չի թողնում, որ անդրկովկասյան դպրոցների վերատեսուչ Նվգենի Օսիպովիչ Հեսսենմյուլլերը տեղյակ է եղել Աբովյանի այդ գործունեությանը և անուղղակի կերպով խրախուսել նրան։ Վերատեսուչը ոչ միայն Աբովյանին թույլ է տվել իր տեսչության տակ գտնվող ուսումնարանում մտցնել հայոց և վրաց լեզուների դասավանդումը, այլև շրջանցելով գրաքննական կանոնները, առանց որևէ սախնական կարծիքի, 1838 թ. կարգադրել է տպագրել Աբովյանի «Նախաշավիղը»⁸։

Այսպիսով, Աբովյանը 1836—1838 թթ. ընթացքում արդեն հարմարվել էր թիֆլիսյան կյանքին և գոհ էր իր դրությունից։ Բայց հաջորդ, 1839 թ. հենց շեմին ամեն ինչ տակնուվրա է լինում. «Հանկարծ ամբողջ երկինքը շանթ ու որոտ արձակեց մեր գլխին», — գրում է նա⁹։

Թիֆլիսը թողնելու և Պետերբուրգում, Մոսկվայում կամ Կադանում որևէ պաշտոն ձեռք բերելու նպատակով Աբովյանը ոտքի է հանում այնտեղի իր բոլոր բարեկամներին։ Թախանձագին խնդրանքներով նա դիմում է ակադեմիկոսներ Ֆրենին, Պարրոտին, կայսրուհու անձնական բժիշկ Մարկուսին, շատ հավանական է նաև թագաժառանգի դաստիարակ Վ. Ա. Ժուկովսկուն, Մոսկվայի բնախուլիների ընկերության պաշտոնյա, իր մտերիմ Շիխովսկուն, Կապանի ուսումնական օկրուգի հոգաբարձու, սենատոր Մուսին-Պուշկինին, անհայտ լուսավորության միեկնոր Ուվարովին, որի համար նա հետագայում խիստ զղջում է¹⁰։

Ի՞նչ էր պատահել, ինչո՞ւ էր Աբովյանն այնպես անհանգստացել, որ Ֆրենին գրում էր. «Եթե դուք կարծում եք ինձ այլ ձևով օգնած լինել, ապա

4 Տե՛ս ն. Տեր-Կարապետյան, Խ. Աբովյան. Թիֆլիս, 1911, էջ 177, 178։

5 Եկթ, հատ. 10, էջ 208։

6 «Իրվան», հատ. 1, էջ 266։

7 Տե՛ս նույն տեղում, հատ. 2, էջ 222։

8 Տե՛ս Եկթ, հատ. 10, էջ 231։

9 Տե՛ս «Իրվան», հատ. 2, էջ 155։ Եկթ, հատ. 10, էջ 216, 218—219, 225—227, 231։

արդեն դրա ժամանակը հասել է», կամ՝ «Ես տարուբերվում եմ ինչպես տաշեղի վրա՝ աչեկոծ ծովի մեջ: Մնկաչոք խնդրում եմ Ձեզ, թանկագին բարերար տեր, ազատեցե՞ք ինձ այս ծանր վիճակից և բախտավորեցրե՞ք»¹⁰: Մի՞թե Աբովյանի «միակ նեցուկի» (իր արտահայտությունն է)՝ Հեսսենմյուլլերի ձերբակալությունը այդքան խորն էր ազդել նրա վրա:

Աբովյանի անհանգստությունը միանգամայն տեղին էր և Հեսսենմյուլլերի գործի հետ էր կապված:

Ո՞րն էր խնդիրը: 1838 թ. սկզբին Երրորդ բաժանմունքի տեղական գործակալները ահազանգում են իրենց պետին՝ Բենկենդորֆին, որ անդրկովկասյան դպրոցների վերատեսուչ Հեսսենմյուլլերը ժամանակը վատնելով մոլեխաղերի վրա, թերանում է իր պարտականությունները կատարելու մեջ: Ժանդարմերի շեֆից ցուցում ստացած Ուվարովը ահազանգող գրությունը կից հաղորդագրություն է ուղարկում Կովկասի կառավարչապետ Ե. Ա. Գուլովին՝ և սրահանջում տեղում ստուգել փաստերը: Վերատեսուչը մեղադրվում էր այն բանում, որ 1837 և 1838 թթ. ընթացքում նա ընդամենը 4 անգամ է եղել Թիֆլիսի գիմնազիայում և ոչ մի անգամ՝ գավառական ուսումնարաններում, որ նա երբևէ ոչ մի աշակերտի չի խրախուսել կամ նախատել, որ գիմնազիայի աշակերտները չեն ստանում կայուն գիտելիքներ, այլ դասերը սերտում են թեթևակի, որ նրանք չգիտեն կայսեր և արքայական ընտանիքի անդամներից ոչ մեկի անունները¹¹ և այլն: Ուվարովը միաժամանակ զգուշացնում է Գուլովինին, որ կառավարության համար դա հատուկ կարևորություն ունեցող գործ է, և ինքը խիստ կափսոսա, եթե մեղադրանքների մեկ տասերորդն անգամ ճիշտ լինի¹²:

Մինչդեռ լուսավորության մինիստրն ու Կովկասի կառավարչապետը գաղտնի գրագրություններ էին փոխանակում, Երրորդ բաժանմունքի գործակալները դրանցից քաղվածք¹³ ստանալով աշխատանքի են անցնում և Հեսսենմյուլլերի կողմից դրամական խոշոր յուրացում են հայտնաբերում:

Այդ բոլորից անտեղյակ Դուլովինը 1839 թ. հունվարի 12-ին Ուվարովին գրում է, որ Հեսսենմյուլլերը ինքը ևս չի ցանկանում Թիֆլիսում ծառայել և շուտով հրաժարական կտա ու կմեկնի Ռուսաստան, որի պատճառով էլ ինքը նրա տեղի համար առաջարկում է գիմնազիայի տեսուչներից մեկի՝ Նիկոլայ Տիմոֆեևիչ Դեմենտևի թեկնածությունը:

Գրությունը դեռ կես ճանապարհին էր, երբ Գուլովինը ստանում է Ուվարովի հունվարի 3-ի նամակը: Մինիստրը հաղորդում էր, որ Հեսսենմյուլլերն արդեն խոստովանել է պետական 50 հազար ռ. արծաթ¹⁴ դրամ յուրացնելու մասին: Այդ պատճառով Ուվարովը կարգադրում է **անմիջապես** ձերբակալել Հեսսենմյուլլերին, անհապաղ ստուգել Թիֆլիսի գիմնազիայի և գավառական ուսումնարանի ֆինանսները և քննության առնել, թե որտեղ է ծախսված կամ ում է տրված պետական խոշոր գումարը¹⁵ և այլն:

¹⁰ Ելժ, հատ. 19, էջ 223:

¹¹ ՏԵՄՎՈՒՄՆՆԻՅԱՆ, ֆ. 2, ց. 1, գ. 5253, թ. 3—4:

¹² ՏԵՄՎՈՒՄՆՆԻՅԱՆ, տեղում, թ. 2:

¹³ ՏԵՄՎՈՒՄՆՆԻՅԱՆ, տեղում, թ. 7:

¹⁴ Ենկ արծաթ ռ. հավասար էր 4 ռ. թղթադրամի:

¹⁵ Նույն տեղում, ֆ. 2, ց. 1, գ. 5974, թ. 1—2:

Թիֆլիսում իրարանցում է սկսվում: Գոլովինի կարգադրությամբ հունվարի 25-ին Հեսսենմյուլլերին նետում են Մետեխի բանտը, նրա տեղը նշանակվում է Դեմենտեր, ստեղծվում է հատուկ հանձնաժողով՝ զիմնադիայի և ուսումնարանների դրամական հաշիվները ստուգելու համար: Կառավարական վերնախավերում դժգոհ են մնում տեղական հանձնաժողովի աշխատանքներից, և Ուլարովը 1839 թ. օգոստոսի 23-ին լրացուցիչ հանձնաժողով է կազմում մինիստրության դեպարտամենտի փոխ-դիրեկտոր Գաևսկու նախագահությամբ ու նրան գործուղում Թիֆլիս¹⁶:

Սեպտեմբերի 17-ին վերատեսչի պարտականություններից հեռացվում է նոր միայն նշանակված Դեմենտեր¹⁷, որը զիմնադիայի խորհրդի մյուս 6 անդամների հետ միասին պատասխանատվության է կանչվում: Դպրոցների վերատեսուչ է նշանակվում հատուկ հանձնարարությունների աստիճանավոր վասիլկովսկին¹⁸:

Հեսսենմյուլլերի գործը 5 տարի ձգձգվում է: Մի քանի հանձնաժողովներից հետո կովկասյան իշխանությունների որոշումը կառավարական սենատը չի հաստատում և նոր քննության համար ետ է ուղարկում Թիֆլիս: Ի վերջո գեներալ-ադյուտանտ Նեյդհարդի ժամանակ վրացա-իմերեթական բրևական պալատը 1843 թ. օգոստոսի 6-ին Հեսսենմյուլլերին դատապարտում է աքսորի: Նրան Թիֆլիսից աքսորավայր են ուղարկում 1844 թ. հունվարի 5-ին¹⁹:

Գործը ձգձգվում էր այն պատճառով, որ մեղադրյալը անընդհատ փոփոխում էր իր ցուցմունքները: Բենկենդորֆին տված սկզբնական բացատրականում Հեսսենմյուլլերը ամբողջ մեղքը վերցնում է իր վրա և գրում, որ իր ենթականերից ոչ ոք մասնակից ու հաղորդակից չէ գործին, և որ 50 հազ. ռ. ինքը վճարել է թղթախաղում իր տանուլ տված 52 հազարի հասնող գումարի դիմաց²⁰:

Սակայն Բենկենդորֆն ու Ուլարովը միամիտներ չէին, նրանք գիտեին, որ նախկին վերատեսուչն այդպես է վարվում, որպեսզի մեղմացնի իր հանցանքը, մանավանդ որ վկաները չէին հաստատում նրա ցուցմունքները:

Դեռևս Գոլովինին ուղարկած հաղորդագրության մեջ Ուլարովը կասկած է հայտնում, որ դժվար թե Թիֆլիսում գտնվի մեկը, որ առանց գրավականի կամ ապահովության, խիղախներ փոխառությամբ նման խոշոր գումար տալ սեփականությունից ղուրկ այդպիսի մի մարդու²¹:

Սա արդեն նշանակում էր, որ պետական գումարի վատնումը պետք է ուրիշ տեղ որոնել: Եվ ահա, հավատ չընծայելով Հեսսենմյուլլերի գրավոր ցուցմունքին, Բենկենդորֆը գործի է զցում իր գործակալներին և կարևոր նորություններ հայտնաբերում, որոնք անմիջապես կապված էին Աբովյանի հետ: Պարզվում է, որ այդ գումարի մեջ էին մտնում նաև Աբովյանի «Նախաշավիղի» տպագրության ծախսերը. Հեսսենմյուլլերը ինքնազուխ կարգադրել էր

16 ՏԼ՝ս նույն տեղում, թ. 77:

17 ՏԼ՝ս նույն տեղում, թ. 65—66, 77:

18 ՏԼ՝ս նույն տեղում, թ. 71—72:

19 ՏԼ՝ս նույն տեղում, թ. 307—308, 337:

20 ՏԼ՝ս նույն տեղում, ֆ. 2, ց. 1, գ. 5974, թ. 1:

21 ՏԼ՝ս նույն տեղում, Թ. 2:

տպագրել «Նախաշավիղը» և այդ հանգամանքը, թերևս, ավելի կբարգասներ իր վիճակը, եթե նա խոստովաներ:

Բայց Աբովյանի համար դա հարցի մի կողմն էր, քանի որ իրավական պատասխանատուն Հեսսենմյուլլերն էր և ոչ թե ինքը: Պարզվում է, որ Աբովյանի անհանգստությունն ավելի խոր հիմքեր ուներ: Նա զգում էր, որ դա առիթ կհանդիսանա բացահայտելու իր դեմոկրատական գործունեությունը:

Եվ Աբովյանը շտապել է:

Ժողովրդական լուսավորության դեպարտամենտի դիվանում պահպանվում է Ուվարովին գրած Բենկենդորֆի գրությունը, թվագրված 13-ը հունիսի 1839 թ.: «Պրոֆ. Պարրոտին մի ժամանակ դեպի Արարատ լեռան գագաթը ուղեկցած հայ ազնվական Խաչատուր Սթովյանը, — գրված է այնտեղ, — նորին մեծության բարձրագույն բարեհաճությամբ հետագայում սովորելով Դորպատի համալսարանում, այնտեղ ձեռք է բերել պատանեկության տարրական գործնական ուսուցման համար անհրաժեշտ բոլոր գիտելիքները: Չնայած համալսարանի շահավետ առաջարկությանը՝ թողնել նրան որպես արևելյան լեզուների ուսուցիչ, վերադառնալով հայրենիք նա իրեն նվիրել է տեղացիների մեջ օգտակար գիտելիքների տարածմանը, մանավանդ արդյունաբերության վերաբերյալ: Այժմ Թիֆլիսի ժողովրդական դպրոցում ղեկավարելով ուսուցչի պաշտոն, իր գործի նկատմամբ ունեցած ջանասիրությամբ նա թարգմանել ու մշակել է պատանեկության համար մի քանի օգտակար գրքեր, բաց միջոցների պակասության պատճառով դեռևս չի կարողացել տպագրել դրանք:

Քանի որ նա հայտնի է Ռուսաստանի նկատմամբ ունեցած իր կապվածությամբ և թագավորի նկատմամբ ունեցած նվիրվածությամբ, ապա ես հարկ եմ համարում նրան հանձնարարել Ձերդ գերազանցության ողորմած ուշադրությանը և խոնարհաբար խնդրել Ձեզ, Ողորմած տեր, հատկացնել նրան, եթե հնարավոր է, միջոցներ նրա օգտակար աշխատությունները հրատարակելու համար»²²:

Այս փաստաթղթի կարևորությունը մի քանի առումներով շատ մեծ է: Դրա ուսումնասիրությունը նախ պարզություն է մտցնում Աբովյանի «Նախաշավիղի» տպագրության ու գործածության հետ կապված հարցերի, ինչպես նաև Կազանի համալսարանի հայագիտական ամբիոնը ղեկավարելու խնդիրների մեջ:

Բենկենդորֆի գրությունը ձևական տեսակետից գրված է Աբովյանի նկատմամբ ցուցաբերվող հոգատարության զգացումով և մեղմ տոնով, որոնց հետևանքով գործից անտեղյակ ընթերցողը ստանում է այն տպավորությունը, որ դա ավելի շուտ Աբովյանի օգտին է գրված, քան նրա դեմ:

Բայց արդյո՞ք այդպես է:

Երրորդ բաժանմունքը քաղաքական հետախուզության և հետաքննության մարմին էր, որի անմիջական պարտականությունն էր հայտնաբերել երկրում ծավալվող հակապետական գաղափարներն ու շարժումները և բնում խեղդել դրանք²³: Նրա գործողության շրջանակներից միանգամայն դուրս էին որևէ մեկին օժանդակելը, եթե դա չէր նպաստում բաժանմունքի անմիջական նպատակներին:

²² ԼՊՁՄ ԿՊՊԱ, ֆ. 733, ց. 82, գ. 42, թ. 51:

²³ Տե՛ս Ժանդարմերիայի կողմից Անդրկովկասի վրա հսկողություն սահմանելու նախագծի 2-րդ կետը: ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 2655, թ. 36:

Իսկ հայտնի իրողությունն է, որ Աբովյանի գործունեությունը, առավել ևս ստեղծագործությունները, երբեք էլ չեն համընկել Երրորդ բաժանմունքի նպատակամղումներին: Ընդհակառակը, դրանք մեծապես նպաստել են երկրում դեմոկրատական մտքի սկզբնավորմանը:

Նշանակում է և՛ սկզբունքորեն, և՛ տեսականորեն բացառվում է Երրորդ բաժանմունքի պետի կողմից Աբովյանի գրքերին կյանքի ուղի տալու հնարավորությունը:

Այնուհետև, Աբովյանի հետ միաժամանակ (1838—1839 թթ.) միևնույն դիրեկցիայի ուսուցիչներ Դավիթ ու Հակոբ Արղանով եղբայրներն ու Դեմենտևը նույնպես դասադրքեր էին կազմել և օրինական կարգով հասել իրենց նպատակին՝ հրատարակել ու գործածության մեջ մտցրել, թեև, հատկապես Դեմենտևի գրքի մասին, ակադեմիան խիստ աննպաստ կարծիք էր տվել²⁴:

Հարց է ծագում, ինչո՞ւ դրանց համար պետք չեղավ Բենկենդորֆի միջամտությունը, իսկ Աբովյանի համար՝ անհրաժեշտություն դարձավ, և դա այն դեպքում, երբ տեղական ու կենտրոնական իշխանությունները առաջինների գրքերի մասին տեղյակ էին, իսկ Աբովյանի գրքերի մասին՝ անտեղյակ: Մեր կարծիքով պատասխանը պարզ է. եթե Արղանովներն ու Դեմենտևը ցարական պաշտոնական գաղափարախոսության ոգով այբբենարան էին գրում, կամ կրոնական դոգմաները տարածելու համար կատեխիզիս կազմում, ապա, հակառակ դրանց, Աբովյանը նախաշավիղ էլ բացում, որպեսզի մատաղ սերունդի հոգում դեմոկրատական նոր սկզբունքներ սերմաներ:

Թվում է, որ Բենկենդորֆի հետաքրքրությունը Աբովյանով ստանում է նույն նշանակությունը, ինչ նրա միջամտությունը Հեսսենմյուլլերի գործին. դա կարգից շեղվողին պատժելու ուղղակի ցուցմունք էր:

Լուսավորության մինիստրությունը այդպես էլ հասկացել է Բենկենդորֆի կարգադրությունը և նրա գրության բովանդակությունը համառոտապես հետևելով ձևով. «Հայ աղնվական խաչատուր Աբովյանի մասին»²⁵ և ոչ թե՛ Աբովյանի գրքերի տպագրության մասին, ինչպես կպատշաճեր գրել: Ստացվում է, որ Բենկենդորֆի գրությունը, ինչպես տրամադրում է նրա արտաքին ձևը, Աբովյանի գրքերի հրատարակմանը չի վերաբերում, այլ՝ Աբովյանի անձին, նրա գործունեությանը:

Այս հետևությունն օգտին են խոսում հետևյալ հանգամանքները: Նախ, մատիտով ընդգծված են Բենկենդորֆի գրության այն տողերը, ուր ասված է. «Պատանեկության տարրական գործնական ուսուցման», «թարգմանել ու մշակել է պատանեկության համար մի քանի օգտակար գրքեր» և «հրատարակման համար»: Սրանք, մեր համոզմամբ, մեկնաբանվել են ընդգծումներն են, որով նա կոռահել է ժանդարմերիաի շեֆի այն միտքը, որ, ըստ կառավարության ակնկալությունների, Աբովյանը պատրաստվել է միայն պատանեկության տարրական գործնական ուսուցման համար²⁶, բայց հակառակ դրան, սեփական

²⁴ ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 5966, թ. 11:

²⁵ ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 733, ց. 82, գ. 42, թ. 51:

²⁶ Որ իսկապես Աբովյանը պետության հաշվին պատրաստվել է տարրական ուսուցչության համար, վկայում է նաև Դորոպատի համալսարանի դիրեկտորին հասցեագրված մի նամակ, ուր գրված է, որ Աբովյանը «учится на средства казны элементарным учителем», տե՛ս ՎՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 1, էջ 93:

նախաձեռնությունը նա մշակել ու թուրղմանել է մի քանի աշխատություններ, որոնք ցանկանում է նաև հրատարակել: Ուրիշ խոսքով Աբովյանը շեղվել է իր համար կառավարության նախատեսած ուղուց:

Երկրորդ, Բենկենդորֆի հիշյալ գրության հետ միևնույն գործում պահվում են անդրկովկասյան դպրոցների համար 1835 թ. հաստատված կանոնադրությունից դուրս գրված վկայակոչումներ: Այնտեղ գրված է, որ կանոնադրության 10-րդ կետը հռչակում է, թե ուսումնական գրքերն ու պիտույքները դիրեկցիային են ուղարկվում լուսավորության մինիստրության դեպարտամենտի կարգադրությամբ, իսկ տարրական ուսուցման ձեռնարկները պետք է կաղմեն դիրեկցիային ենթակա՝ տվյալ առարկան դասավանդող ուսուցիչները: Բսկ հաջորդ՝ 11-րդ կետում նշված է, որ դիրեկցիան նախապես պետք է ստանա ուսումնական ձեռնարկի տպագրման վերաբերյալ գրաքննության հավանությունը, ապա և Վրաստանի կառավարչապետի ու լուսավորության մինիստրի համաձայնությունը՝ ինչպես տպագրության ծախսերի, այնպես էլ այն հեղինակների վարձատրման չափի մասին, որոնց հանձնարարվում է ձեռնարկներ կազմելը կամ հրատարակելը²⁷:

Օրենք մատնացույց անող այս փաստաթուղթը չունի ո՛չ դրոշմակնիք, ո՛չ հասցեագիր, և ո՛չ էլ տարեթիվ. միմիայն փաստաթղթի առաջին էջի վերջում համառոտ նշված է, որ այն գրված է հունվարի 19-ին: Սա Երրորդ բաժանմունքի գործելաձևն էր, աննկատ մնալու նրա սկզբունքը:

Աբովյանին վերաբերող Բենկենդորֆի գրության հետ սույն փաստաթղթի միևնույն գործում պահպանվելու փաստն իսկ խոսում է այն մասին, որ օրենքը վկայակոչված էր «նախաշավիղը» դրողի և նրա հրատարակումը իրականացնողի օրինազանցությունները մատնացույց անելու համար: Առանց վերադաս մարմինների հանձնարարության Աբովյանը իրավունք չի ունեցել դասագիրք գրել, մանավանդ որ նա տվյալ առարկան (հայոց լեզու և գրականություն) դասավանդող ուսուցիչ չի եղել երբեք: Հեսսենմյուլլերն իր հերթին ավելի մեծ խախտում էր արել. նախքան «նախաշավիղի» հրատարակության մասին կարգադրություն անելը, նա պարտավոր էր ստանալ գրաքննության հավանությունը, ինչպես նաև հրատարակման ու վարձատրման ծախսերի մասին կառավարչապետի ու մինիստրի համաձայնությունը:

Աբովյանի անհանգստության պատճառը, սակայն, իր թույլ տված իրավական խախտումները չէին միայն, որովհետև վերջին հաշվով դրա առավել պատասխանատուն Հեսսենմյուլլերն էր և ոչ թե ինքը: Նրա մտահոգության առարկան իր կազմած դասագրքերի բովանդակության մեջ կատարած գաղափարական, մեթոդաբանական այն շեղումներն էին, որ նրա համոզմամբ վաղ թե ուշ հայտնի պիտի դառնային:

Ստանալով Բենկենդորֆի գրությունը, լուսավորության մինիստր Ուվարովը հրամայում է՝ պահանջել գրքերը ու իմանալ դրանց դիմաց Աբովյանի պահանջների մասին և տեղեկացնել Բենկենդորֆին²⁸:

Մի կարևոր հանգամանք ևս: Պարզվում է, որ Աբովյանի մասին Ուվարովին գրած Բենկենդորֆի գրությունը միակը և առաջինը չէր: Աբովյանի «Դիվանում» տպագրված է Թիֆլիսի գինվորական նահանգապետի գրությունը՝ ուղղված դպրոցների վերատեսչությանը, որը բառացիորեն նույն բովանդա-

27 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 733, ց. 82, գ. 42, թ. 55:

28 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 733, ց. 82, գ. 42, թ. 51:

կոթորակներն ունի, ինչ միևնույն ժամանակահատվածում²⁹։ Փաստաթղթերից իմացվում է, որ այն գրված է Բենկենդորֆի անմիջական ցուցմունքով և Կովկասի կառավարչապետի կարգադրությամբ (թվագրված է 19 հունիսի 1839 թ.)։ Դա նշանակում է, որ Բենկենդորֆը Կովկասի կառավարչապետին ավելի շուտ էր գրել, քան լուսավորության միևնույն ժամանակահատվածում։ Այս փաստից կարելի է եզրակացնել, որ Աբովյանի մասին Երրորդ բաժանմունքի պետը նախ ցուցմունք է տվել Անդրկովկասի կառավարչապետին, իսկ հետո՝ նաև լուսավորության միևնույն ժամանակահատվածում։

Երրորդ բաժանմունքի գործունեության համար դա եզակի դեպքերից էր, որովհետև նրա ներքին կանոնադրությունը արդելում էր գրավոր հաղորդակցություններն ընդհանրապես և խստիվ պատվիրում, որ «ժանդարմը պետք է բոլորին հետևի, բայց ուստի կանոնական բացահայտ աստիճանավոր չդառնա երբեք, ամեն ինչի մասին հաղորդի, բայց լրտեսի ու մատնիչի անուն չվաստակի, հետապնդի ամեն մի հանցագործություն, բայց ոչ ոքի հետ չթշնամանա, մի խոսքով ամեն ինչին խառնվի, բայց ամենուրեք աննկատ մնա»³⁰։ Հենց այդ նպատակով էր մշակված նաև վերնախավին հասկանալի Երրորդ բաժանմունքի եղբայրության այն «լեզուն», որով գրված էին Բենկենդորֆի՝ Աբովյանին վերաբերող գրադրությունները։

Խիստ ուշագրավ է, որ պետական խոշոր գումար վատնող Հեսսենմյուլլերի մասին Երրորդ բաժանմունքի պետը գրավոր հաղորդակցության մեջ էր մտել միայն Ուվարովի հետ և նրա միջոցով էր Գոլովինից գործողություններ պահանջում, իսկ Աբովյանի կապակցությամբ, խախտելով կարգը, նա անհրաժեշտ էր գտել գրավոր ցուցմունքներ տալ Գոլովինին և Ուվարովին առանձին-առանձին։

Հեսսենմյուլլերի մեծ աղմուկ հանած գործի թոհուրոհի ամենաեռուն ժամանակաշրջանում ցարական բյուրոկրատական լեզվին քաջամուտ աստիճանավորներին միանգամայն պարզ էր հարցի էությունն ու լրջությունը։ Կարելի է կարծել, որ Աբովյանի անձով Բենկենդորֆի սոսկ հետաքրքրվելու փաստը առկա պաշտոնյաներին ամեն ինչ հասկանալի էր դարձնում։

Անմեղ թվացող վերոհիշյալ գրությունների մեջ Աբովյանի վրա մեր կարծիքով ավելի լուրջ մեղադրանքներ էին բարդում։ Նրան մեղադրում էին, որ պետության հաշվին բարձրագույն կրթություն ստանալով, նա խուսափել է դրա դիմաց 6-ամյա պարտադիր ծառայությունից և մերժել Դորպատում մնալու առաջարկությունը, իրեն նվիրել «այլազգիների» մեջ լուսավորություն տարածելու գործին և միևնույն նպատակով, հակառակ գործող օրենքի, շարադրել է գրքեր և ցանկանում է պետության հաշվին դրանք տպագրել։

Թագավորի նկատմամբ Աբովյանի ունեցած նվիրվածության մասին Բենկենդորֆի միտքը, մեր կարծիքով, հասկանալի ակնարկ է եղել, որ Աբովյանը խախտել է աստիճանի դիմաց ցարին անձնվիր ծառայելու և գահին հավատարիմ լինելու վերաբերյալ տված իր երդումը, որ նա երդմնադանց է։ Ուվարովի համար միանգամայն հասկանալի է եղել, որ հենց այդ պատճառով է Բենկենդորֆը իր հատուկ ուշադրությունը հրավիրում Աբովյանի վրա։

Եթե դա Բենկենդորֆի կողմից իրոք անկեղծ խնդրանք էր Աբովյանի դիտավորություններն իրադրոժելու համար, ապա ինչու՞ էր նա պահանջում, որ

²⁹ Տե՛ս «Իմպան», հատ. 1, էջ 208։

³⁰ Տե՛ս ՀՀԳԱ, ֆ. 109, մ. 86, պահպ. միավոր 1ա, էջ 326—327։

նրա ձեռագրերը վերցնեն ձեռքից, քննեն և եղրակացությունը կառավարչապետի միջոցով ուղարկեն իրեն, կամ գրաքննելու նսկատակով դրանք ուղարկեն Պետերբուրգ³¹։

Խնդիրը պարզող մի շարք մանրամասնություններ կան Անդրկովկասի կառավարչապետին հղած՝ Ուվարովի 1841 թ. փետրվարի 20-ի հաղորդագրության մեջ, «1839 թ. գեներալ-ադյուտանտ կոմս Բենկենդորֆից իմ ստացած ծանուցման հիմունքով,— գրում է մինիստրը,— այն մասին, թե Թիֆլիսի գավառական դպրոցի հաստիքավոր տեսչի պաշտոնակատար Աբովյանը թարգմանել ու մշակել է պատանեկության համար մի քանի օգտավետ շարադրություններ, բայց չի կարողացել տպագրել միջոցների պակասության պատճառով, իմ կողմից առաջարկված է եղել... Աբովյանից տեղեկություններ պահանջել նրա պատրաստած գրքերի մասին և նույն այդ գրքերն ուղարկել Ս. Պետերբուրգ՝ նախնական քննության համար...

Մեր հետևանքով վերատեսչությունն ուղարկեց Աբովյանի մի ձեռնարկը մանուկների սկզբնական ուսուցման համար, կազմված ըստ նորագույն մանկավարժական մեթոդի, և մի ռուս քերականություն՝ հայերի համար, հորինված Տապպեի ձեռնարկի օրինակով, ավելացնելով, թե այն նպաստը, որ ցանկանում է ստացած լինել Աբովյանը, այն է, որ իր այդ գրքերը տպագրված լինեն արքունի ծախսով, և որ, նրա բացատրությամբ, ինքն ունի կազմած նույն 2 գիրք ու դործնական քերականություն հայոց նոր բարբառով՝ 2 լեզվի (գրաբարի և աշխարհաբարի)³² ուսուցման համար և բոլոր գիտությունների ու գիտելիքների կրճատումը (сокращение всех наук и познаний), որոնք սակայն չէին կարող նույն ժամանակ ներկայացված լինել... բայց դրանց համար նա արդեն ունի պատրաստած նյութեր»³³։

Այնուհետև Ուվարովը հաղորդում է, որ Աբովյանի գրքերը կարծիքի է տվել ակադ. Բրոսսեին, ստացել նրա եզրակացությունը, և որ այդ գրքերից միայն քերականությունը կարող է ընդունված լինել՝ այն էլ մի պայմանով, եթե հեղինակը այն վերամշակի Բրոսսեի դիտողությունների ոգով և այլն։

Վերջում մինիստրը Անդրկովկասի կառավարչապետի կարծիքն է խնդրում Աբովյանի գրքերի տպագրության ծախսերի և այն աղբյուրի մասին, որտեղից ինքը կարող է ստանալ, «որովհետև,— բացատրում է Ուվարովը,— մինիստրությունը... դրա համար չունի և ոչ մի միջոց»։

Այսպիսով, այս հաղորդագրությունից իմանում ենք, որ Աբովյանի վերաբերյալ բոլոր գրադրություններն ու գործողությունները տեղի են ունեցել Բենկենդորֆի ցուցմունքներով, որի համաձայն քննել են Աբովյանին և բացատրություն պահանջել նրա գրական գործունեության մասին և ի հայտ բերել, որ բացի «Նախաշավիղից» նա ունի ևս 3 գիրք, իսկ 2-ի համար էլ՝ պատրաստի նյութեր։ Ուվարովի կտրուկ այն արտահայտությունը, թե մինիստրությունը տպագրման համար չունի և ոչ մի միջոց, վկայում է, որ ցարական կառավարությունը երբեք մտադրություն չի ունեցել Աբովյանի դասագրքերի հրատարակմանը ընթացք տալ, գրքեր, որոնք հայտնաբերվել էին պետական

31 Տե՛ս «Դիվան», հատ. 1, էջ 210։ ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 733, ց. 82, գ. 42, թ. 51, կատարման մակագրությունը և թ. 52 Ուվարովի պատասխանը Բենկենդորֆին։

32 Սույն բացատրությունը Ե. Շահազիզինն է, համտ. «Դիվան», հատ. 1, էջ 211, ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 733, ց. 82, գ. 42, թ. 54ա, 72ա։

33 «Դիվան», հատ. 1, էջ 211։

վատնված խոշոր գումարը փնտրելու ժամանակ և անմիջական կապ ունեին այդ գործի հետ։ Ուստի Երրորդ բաժանմունքի համար տվյալ դեպքում դրանք ոչ թե աշակերտությանը հանձնարարվող ձեռնարկներ էին, այլ իրեղեն ապացույցներ։ Այդ իսկ պատճառով էլ կառավարական մարմիններն աշխատում էին ձեռք բերել գրքերի ձեռագրերը և գրաքննության միջոցով պարզել հեղինակի մտածելակերպն ու լուծել իրենց հետաքրքրող հարցը՝ Աբովյանը «մե՞ղ հետ է, թե՞ մեր դեմ»։

Ահա թե ինչու, մեր կարծիքով, Աբովյանին օժանդակելու մասին Բենկենդորֆի խնդրանքը երբեք չի կարելի բառացիորեն ընկալել։ Երրորդ բաժանմունքի պետի գրուքյունը, որ շարադրված է բյուրոկրատական վերնախավերին սիանգամայն հասկանալի հատուկ ոճով, պետք է կարդալ տողամեջ, իր ենթատեխտով և րմբոնել նրա իսկական նշանակություներ, այսինքն՝ այնպես, ինչպես դա կարդացել, հասկացել ու իրագործել են ցարական աստիճանավորները։ Հենց միայն այն փաստը, որ Աբովյանի կազմած դասագրքերը ի վերջո մնացին ձեռագիր վիճակում և գործածությունից դուրս, դարձյալ խոսում է Բենկենդորֆի «խնդրանքի» խաբուսիկ լինելու մասին, որովհետև նման բարձրագույն պաշտոնյայի միջնորդության մերժումը անկարելի էր։ Նշանակում է, նրա գրության մեջ Աբովյանի մասին տեղ գտած «օգտակար գրքեր», «օգտակար գիտելիքներ» և նման այլ բառերը գրված ու ընկալված են հակառակ վնասակար իմաստով։ Դրա ապացույցը Աբովյանի վերաբերյալ «գործ» տեղծելն էր։

Նուսավորության միևնույնության դեպարտամենտում ստանալով Բենկենդորֆի գրությունը, հաջորդ օրը՝ 1839 թ. հունիսի 14-ին, Աբովյանի մասին հատուկ գործ է բացվում հետևյալ անվան տակ. «Համաձայն կոմս Բենկենդորֆի գրության, հայ ազնվական Աբովյանի աշխատությունների լույս ընծայման համար միջոցներ տրամադրելու մասին»։

Ուշագրավ է, որ այդ ձևակերպումը եթե արտաքինապես համապատասխանում է Աբովյանի «գործի» հիմնադիր փաստաթղթի՝ Երրորդ բաժանմունքի պետի գրության բովանդակությանը, ապա նաև ղգալիորեն տարբերվում է նրա այն համառոտագրությունից («Հայ ազնվական խաշատուր Աբովյանի մասին»), որ արվել ու գրվել է հենց նույն դեպարտամենտում։ Նշանակում է Աբովյանի «գործի» անվան ձևակերպումը խաբուսիկ էր և գործի էությունը քողարկող, որի համար էլ Բենկենդորֆի գրությունը չի կրել «գաղտնի» կամ «խիստ գաղտնի» վերտառությունը։

Այս փաստը մեղ բերում է այն հետևություն, որ Երրորդ բաժանմունքը Աբովյանի մասին իր գրասենյակում ընդհանրապես ոչ մի գործ չի ստեղծել կամ պահել։ Ամենուրեք աննկատ մնալու իր գործելաձևին համապատասխան նույն այդ բանը նա արել է Աբովյանի վերադաս մարմնի՝ Նուսավորության միևնույնության դեպարտամենտում, այն էլ քողարկված ձևով։

Դրա օգտին է խոսում նաև հետևյալ փաստը։ Անդրկովկասում նոր վարչաձև մտցնելու կապակցությամբ ցարից լիազորված պետական քարտուղար Պողենը առաջարկում է Կովկասի ժանդարմերիային տալ նաև գործադիր իշխանություն, 1842 թ. հոկտեմբերի 15-ի իր պատասխանում Բենկենդորֆը առաբկում է Պողենին, պատճառաբանելով, որ այդպես վարվելու դեպքում, ինչպես ցույց է տվել իր 16-ամյա փորձը, կառավարությունը ոչ մի ստույգ տեղեկություն չի ստանա տեղից։ Մինչդեռ, գրում է ժանդարմերիայի շեֆը,

«Ժանդարմական 6-րդ կորպուսի հիմնադրման օրից»³⁴ Անդրկովկասում կատարվող համարյա բոլոր իրադարձություններն ինձ հայտնի են, ինչպես դա կարելի է տեսնել, եթե ռազմական և մյուս միևնույն ժամանակահատվածում հղում անեն հայտնի զեկուցագրերից ու հաղորդագրություններից կազմելու լինենք նրա պատկերը»³⁵։

Բենկենդորֆի գրությունը, մանավանդ նրա վերջին արտահայտությունը դարձյալ հաստատում է այն իրողությունը, որ Անդրկովկասում տեղի ունեցած իրադարձությունների մասին (տվյալ դեպքում՝ Աբովյանի հետ կապված) ճշմարտությունը կարելի է իմանալ միմիայն համապատասխան միևնույն գրած Բենկենդորֆի ցուցումներից։

Անշուշտ պատահականություն չպետք է համարել, որ լուսավորության միևնույն ժամանակահատվածում Անդրկովկասից Հեսսենմյուլլերի ու Աբովյանի մասին կա հատուկ գործ, մինչդեռ մյուս բոլոր ուսուցիչների հետ կապված հարցերը (այդ թվում և դասագրքեր գրելն ու դրանց գործածության մեջ դնելը) լուծվել են սովորական գրագրությունների միջոցով, առանց որևէ «գործ» ստեղծելու։

1839 թ. օգոստոսին, դպրոցների վերատեսուչ Դեմենտևը (Աբովյանի թշնամի և հայատյաց մի մարդ) լուսավորության միևնույն ժամանակահատվածում Աբովյանին առաջարկում է, որ եթե նա ցանկանում է զբաղեցնել Կազանի համալսարանի հայագիտական ամբիոնը, ապա մինչև նոյեմբերի 1-ը (3 ամսով ընթացքում) պետք է մի դիսերտացիա ներկայացնի ակադեմիային։

Առաջարկությունը խիստ գայթակղիչ էր, բայց ժամկետը՝ շատ կարճ։ «Բացի սրանից, — գրում է Աբովյանը, — ես ինքս էլ չգիտեմ, թե իրոք ինչ է ակադեմիայի պահանջած աշխատությունը»³⁶։

Ի՞նչն էր տարակուսանքի մեջ գցել Աբովյանին։ Հարցը նրանում էր, որ հայագիտական ամբիոնը Կազանում բացվել էր ակադեմիկոս Ֆրենի առաջարկությամբ ու միջնորդությամբ և հատկապես Աբովյանի համար, նախապես այդ հարցը համաձայնեցնելով Կազանի ուսումնական օկրուգի հոգաբարձու Մուսին-Պուշկինի հետ։ Այդ մասին նիկոլայ I-ի համաձայնությունը ստացվում է 1839 թ. մարտին։

Նշանակում է մարտից շուտ հայագիտական ամբիոն բացելու և Աբովյանին այնտեղ հրավիրելու մասին խոսք չէր կարող լինել։ Ցարի համաձայնությունը դեռ հայտարարություն չէր մրցույթ անցկացնելու մասին, որը տեղի է ունեցել 1839 թ. օգոստոսի 29-ին³⁷։ Ֆրենի գործունե մասնակցությամբ հաջողված պաշտոնի համար Աբովյանը կարող էր հրավիրվել հենց նույն Ֆրենի (որը Աբովյանի ու Մուսին-Պուշկինի հետ սերտ նամակագրության մեջ էր) կամ Կովկասի կառավարչապետի միջոցով։ Ինքը՝ Աբովյանը, լրագրերից իմանալով կայսեր համաձայնության մասին, անմիջապես դիմել է և՛ հոգաբարձուին, և՛ միևնույն ժամանակ (ապրիլ,

³⁴ Անդրկովկասում 6-րդ կորպուսը (ժանդարմական) հիմնվել է 1837 թ.։

³⁵ ՀՀԳՊԱ, ֆ. 109, ց. 8, գ. 395, 1831, թ. 81—81ա։

³⁶ ԵԼԺ, հատ. 10, էջ 231։

³⁷ Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. դիտ.), 1956, № 3, էջ 33։ Հրապարակման մեջ անձնություն կա. «Сибирские ведомости» փոխարեն պետք է լինի «Санктпетербургские ведомости», Դորպատի փոխարեն՝ Կազան (տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 733, ց. 42, գ. 162, թ. 106)։ Ճիշտ է այն կարծիքը, թե այս գործում վճռական դեր է խաղացել Աբովյանի անվան շփոթումը։

հունիս)։ Հարց է ծագում. իսկ ինչո՞ւ ցարական բարձրագույն պաշտոնյաները չբարեհաճեցին Աբովյանին հրավիրել հենց նրա համար բացված ամբիոնը զբաղեցնելու։ Մեր կարծիքով, Աբովյանի նկատմամբ հատուկ դիտավորություն էր կիրառվում, նրան նեղ շրջանակների մեջ էին դնում որոշակի միտումով։ Այդ են ապացուցում նաև հետևյալ փաստերը։ Կազանի նույն ամբիոնը զբաղեցնելու նպատակով 1841 թ. Դորպատի համալսարանական ընթացքը նոր ավարտած Ս. Նազարյանին Մուսին-Պուշկինը, մինիստրի կարգադրությամբ, նշանակում է համալսարանի ադյունկտ և 571 ռ. 43 կ. (արծաթ) դրամ հատկացնելով՝ մեկ տարով նրան թողնում է Պետերբուրգում, որպեսզի Ֆրենի ու Բրոսսեի ղեկավարությամբ կարողանա պահանջվող դիսերտացիան գրել³⁸։ Նույն գործի համար Աբովյանից հետո և Նազարյանից առաջ մեկ ուրիշ թեկնածուի ավելի շատ ժամանակ է տրված եղել³⁹։

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ Աբովյանը Կազանի համալսարանում պրոֆեսորի պաշտոն չի ստացել հիմնավոր պատճառներով, որոնք, մեր կարծիքով, կապված էին Հեսսենմյուլլերի գործի հետ։ Հունվարի 25-ին ձերբակալում են Հեսսենմյուլլերին։ Փետրվարի 23-ին Աբովյանը Ֆրենին է դիմում, որ իրեն ծանր վիճակից հանի և օգնի Թիֆլիսից հեռանալու։ Մարտի վերջին տեղեկանալով ցարի համաձայնության մասին, ապրիլի 9-ին Աբովյանը դիմում է Մուսին-Պուշկինին։ Մայիսի 5-ին վերջինս, ստանալով Աբովյանի նամակը, պատճենահանել է տալիս այն և վավերացված ուղարկում Ուվարովին⁴⁰։ Մայիսի 17-ին Կազանի գործի վերաբերյալ իր կարգացածի ու լսածի մասին Ֆրենին հաղորդելով, Աբովյանը տարակուսանք է հայտնում. «Իսկ թե ինչո՞ւ մինչև այժմ Ձեզանից ոչ մի տեղեկություն չունեմ, թե ինչպե՞ս կարող էր մի այդպիսի թյուրիմացություն տեղի ունենալ, ինչո՞ւ պարոն հոգաբարձուն ոչ մի քննություն չի կատարել, մնում է ինձ անբացատրելի»⁴¹։ Հունիսի 3-ին ստանալով Աբովյանի նամակը, 3 օր հետո Ֆրենը կես խուսափողական, կես հուսազրոյ և միաժամանակ զգաստացնող մի պատասխան է գրում նրան. Ակադեմիկոսը թեև գրում է, որ ինքը շատ ուրախ է Աբովյանի հաղորդած մանրամասնությունների համար (մի բան, որ հակառակը պետք է լիներ) և չպետք է կասկածել հաջողության վրա, բայց միաժամանակ հաղորդում էր, որ աշխատանք գտնելու համար ինքը խոսել է նաև Լազարյանի ու Խուդաբաշյանի հետ, որոնք և խոստացել են Աբովյանին Լազարյան ճեմարանում պաշտոն տալ⁴²։

Կարծում ենք, որ Ֆրենի նամակը ևս պետք է կարդալ տողամբ։ Նրա այն արտահայտությունը, թե՝ «պարոն մինիստրի հետ խոսել եմ Ձեր մասին և Ձեզ ջերմորեն հանձնարարել նրան և նրանից հանգստացուցիչ հավաստիացում ստացել, թե Թիֆլիսի գիմնազիայի նախկին դիրեկտորի անհրաժեշտ դարձած հեռացումից հետո, Ձեզ համար միանդամայն չեն կարող վնասակար հետևանքներ առաջանալ»⁴³, Աբովյանի համար խիստ թափանցիկ ակնարկ էր, որ Ֆրենի և Ուվարովի միջև տեղի ունեցած խոսակցության ըն-

38 Տե՛ս Մուսին-Պուշկինի գրությունը Ուվարովին (10. 4. 1839), նույն տեղում, էջ 87—88։

39 Տե՛ս Բրոսսեի հաղորդումը Ուվարովին, նույն տեղում, էջ 89։

40 Տե՛ս Ելժ, հատ. 10, էջ 387, նամակի ծանոթագրությունը։

41 Նույն տեղում, էջ 223։

42 Տե՛ս «Դիվան», հատ. 2, էջ 157։

43 Նույն տեղում, էջ 156—157։

Թացքում շոշափվել է նաև Հեսսենմյուլլերի գործին առնչվող հարցը։ Այդ պատճառով էլ նա Աբովյանին հասկացնում է, որ թեև վատ հետևանք (այսինքն՝ ձերբակալություն) չի լինի, բայց Կադանի գործի մասին էլ պետք է ընդմիշտ մոռանալ։ Աբովյանը այդ մտքով էլ հասկանում է իր պաշտպանին և շատ ղղջում, որ չսպասելով նրա պատասխանը ստանալուն, նույն հարցով հունիսի 1-ին ինքը դիմել էր Ուվարովին։ 17-րդ օրը ստանալով Աբովյանի նամակը, մինիստրը պատճենահանել է տալիս այն և 22-ին ուղարկում Կադանի համալսարանի հոգաբարձուին⁴⁴։

Մենք արդեն գիտենք, որ հունիսի 19-ին Բենկենդորֆի ցուցմունքով Թիֆլիսի ղինվորական նահանգապետը դպրոցների վերատեսչից պահանջել էր Աբովյանի ձեռագրերի քննության եղրակացությունը։ Նշանակում է առնվազն 1 ամիս առաջ՝ մայիսին, Պետերբուրգում արդեն հայտնի էր, որ Աբովյանը անմիջական առնչություն ունի Հեսսենմյուլլերի գործի հետ։

Այդ տեսակետից Աբովյանին միանգամայն հասկանալի է եղել Ֆրենի նամակի վերջում նրա հաղորդածը. «Համոզված եղեք, որ ես և պարոն Պարրոտը և Ձեր այստեղի մյուս բարեկամները միշտ էլ ամենաանկեղծ վերաբերմունք ենք ունեցել դեպի Ձեզ և որ մեզանից յուրաքանչյուրն, անշուշտ, անսահման կուրախանար, եթե ի վիճակի լիներ օժանդակելու Ձեր դրություն»⁴⁵։

Սա արդեն նշանակում էր, որ Աբովյանի պետերբուրգյան անշահախնդիր բարեկամներն ու պաշտպանները, այդ թվում նաև արքունական տան հետ մոտիկ հարաբերությունների մեջ գտնվող ակադեմիկոս Պարրոտը, թագաժառանգի դաստիարակ Վ. Ա. Ժուկովսկին, կայսրուհու անձնական բժիշկ, հայագգի «լեյբ մեդիկ» Մարկուսը, ակադեմիկոսներ Ֆրենը, Շյորգենը, պատմաբան-բանասեր Ֆ. Ադելունգը (արտաքին գործերի մինիստրության կից Արեւելյան լեզուների ինստիտուտի վերատեսուչ) և մյուսները ամեն ինչ արել են՝ միայն Աբովյանի համար Հեսսենմյուլլերի գործի կապակցությամբ վատ հետևանքներ չլինելու ուղղությամբ, բայց Թիֆլիսից Կադան տեղափոխելու հարցում անդոր են գտնվել։ Այդ պատճառով էլ Ֆրենը դրա մասին Աբովյանին տողամեջ հասկացրել է։

Սակայն օգոստոսին դպրոցների վերատեսուչը Աբովյանին առաջարկում է Կադանի հայագիտական ամբիոնը ղեկավարելու նպատակով կարճ ժամկետում մի դիսերտացիա ներկայացնել։ Սա անակնկալ էր նրա համար։ Ֆրենի խորհրդով Աբովյանը համարյա մոռացության էր տվել այդ գործը, որի համար և նա բացատրել է. «Եթե ես չունենայի պարոն Մուսին-Պուշկինի կողմից արված այն հարցումը, որ ստացա էջմիածնի հայկական Սինոդի դիվանից, այդ մասին հաղիվ թե մտածեի»⁴⁶։

Ահա ինչն էր տարակուսանքի մեջ գցել Աբովյանին։ Բայց նա իրեն չկորցրեց, այլ անմիջապես կողմնորոշվեց՝ առիթը բաց չթողնել ձեռքից։ «Եթե ես ժամանակս նվիրեի հիշյալ դիսերտացիան գրելուն,— բացատրում է նա,— ապա պետք է թողնեի իմ բոլոր պաշտոնական գործերը, բայց... եթե աշխա-

⁴⁴ Տե՛ս ելժ, հատ. 10, էջ 390, Ուվարովին դրած նամակի ծանոթագրությունը։

⁴⁵ «Դիվան», հատ. 2, էջ 157։

⁴⁶ Ելժ, հատ. 10, էջ 231։ Հարցումը եղել է ոչ թե Կադան հրավիրելու մասին, այլ՝ «ծանոթություն... Աբովյանի և նրա բնակության տեղի մասին», տե՛ս «Դիվան», հատ. 1, էջ 239։

տուությունն էլ շվավերացվեր, կմնայի միանգամայն առանց հացի,— դրա համար անտես արի այդ էլ»⁴⁷:

Եվ ահա, խուճապի շմատնվելով, Աբովյանն աշխատում է օգտագործել պետերբուրգյան իր բարեկամների հեղինակությունը և ինչ-որ շահով հաղթող դուրս գալ ցարական իշխանությունների՝ իր նկատմամբ սկսած խաղից:

Հոկտեմբերի 9-ին նա գրել է Ֆրենին. «Առաջիկա փոստով պիտի Ձ գիրք ուղարկեմ ժողովրդական լուսավորության մինիստրությանը: Մեկը հայերեն աշխարհաբար լեզվի մի դասագիրք է, իսկ մյուսը՝ Տապպեի քերականությունը՝ վերամշակված հայ ժողովրդի համար: Հույս չունեմ, թե այդպիսի աշխատանքները համապատասխան լինեն այդ առաջադրանքին: Բայց եթե իրոք այնպես եղավ, որ այս գրքերը բավարարեն այն նպատակը, ապա դա ինձ համար մեծ ուրախություն կլինի, իսկ եթե ոչ՝ ապա խնդրում եմ արգոյաբար, թանկագին պարոն իսկական պետական խորհրդական, որ գոնե ապարդյուն չհամարեին իմ աշխատանքները... Ինձ համար ավելի մեծ ցավ կլիներ, եթե Ակադեմիան չթափանցեր նրա նպատակի մեջ և թողներ դարձյալ խեղճ ժողովրդին խարխափելու խավարի մեջ: ... Այս իսկ պատճառով հույս ունեմ, որ Դուք, ամենաբարի բարերար տեր, և պարոն ակադեմիկոս Բրոսսեն չպիտի արհամարհեք խնդիրքս՝ թույլ տալ երկս տպագրության ուղարկելու»⁴⁸:

Աբովյանի այս տողերից երևում է, որ անդրկովկասյան դպրոցների վերատեսուչը, վերադաս օրգանների ցուցմունքների համաձայն, Աբովյանին առաջարկել է նաև, որ եթե նա չկարողանա դիսերտացիան կարճ ժամանակում գլուխ բերել, ապա դրա փոխարեն կարող է ներկայացնել իր մոտ գտնվող արդեն պատրաստ աշխատությունները:

. Աբովյանը հասկացել է ցարական իշխանությունների մեքենայությունները, բայց չի ցանկացել ասպարեզը վիջել նրանց, այլ աշխատել է օգտագործել առիթը և իր գրքերի տպագրությունը հաջողեցնել: Ֆրենը ճիշտ այդպես էլ ըմբռնել է Աբովյանին և ընդգծել նրա նամակի այն տեղերը, ուր հիշատակվում են մինիստրությանը ուղարկվող գրքերը և նրա ցանկությունը՝ որ Ակադեմիան թափանցի գրքերի նպատակների մեջ ու շարգելակի տպագրության գործը⁴⁹:

Սակայն քնած չէր և Ուվարովը: Քաջատեղյակ Ֆրենի ու Աբովյանի մտերմական հարաբերություններին, նա գրքերի գրախոսությունը (մենք կասեինք՝ գրաքննությունը)⁵⁰ հանձնարարում է միմիայն Բրոսսեին: Դրա միտումնավորությունը երևում է հենց նրանից, որ միևնույն պաշտոնի համար հետագայում Ս. Նազարյանի ներկայացրած շարադրությունները կարծիքի տրվեցին Ֆրենին ու Բրոսսեին միասին⁵¹:

Բրոսսեի վիճակը շատ փափուկ էր: Մի կողմից նրան ընկճում էր իր բարերար Ուվարովի հանձնարարության պատասխանատվությունը, իսկ մյուս կողմից՝ բարոյապես ճնշում էին Աբովյանի խոր ճշմարտացիությունն ու նրան գնահատողների հեղինակությունը: Ի վերջո ակադեմիկոս Բրոսսեն մի մեղա-

⁴⁷ Ելժ, հատ. 10, էջ 231:

⁴⁸ Նույն տեղում:

⁴⁹ Տե՛ս Ելժ, հատ. 10, էջ 390, Ֆրենին հղած նամակի բացատրությունը:

⁵⁰ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 1, էջ 198:

⁵¹ Տե՛ս ՀՄՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 8, էջ 85, 91:

դրական գրախոսություն է դրում⁵²։ Աբովյանի գրքերի դրա՞նեությունը պարզեց, որ դրանց հեղինակն իր հայացքներով կանգնած է պաշտոնական ժողովրդայնության տեսության հակառակ դիրքերում, իր գաղափարներով ղգալիորեն նսեմացնում է ճորտատեր-կալվածատերերի պետության հոգևոր հենարանի՝ եկեղեցու դերն ու նշանակությունը, որ նա իր երկերը գրել է դրա՞նեության օրենքներով անթույլատրելի «տխմար ոճով» և եվրոպական հեղինակների օրինակով, հարմարեցնելով դրանք «ստորին դասակարգի» հասկացողություններին ու ղգացմունքներին, որ նա անվախ է, հանդուգն և համարձակ։

Թվում է, թե հենց այստեղ պետք է փնտրել ցարական իշխանությունների կողմից Աբովյանի նկատմամբ սահմանված գաղտնի այն հսկողության պատճառը, որի հետևանքով նրան արգելված էր առանց հատուկ թույլտվության շրջագայել երկրում և փոխել բնակության վայրը⁵³։ Ի վերջո, որպես կառավարության համար անբարեհույս անձնավորություն, նրան հեռացրին Անդրկովկասի կենտրոնից և տեղափոխեցին Նրևան։

Այս հարցը նույնպես պարզաբանման կարոտ է։ Ուսումնասիրողների գերակշռող մասը, հենվելով Աբովյանի վկայության (այն էլ ոչ լրիվ) և նրա տված դիմումի վրա, գտնում է, որ Թիֆլիսից Նրևան տեղափոխումը կատարվել է Աբովյանի կամքով, որի պատճառը նրա պաշտոնակիցների շար նախանձն ու անբարյացակամությունն են եղել։

Նախ՝ տեղափոխման առիթով Աբովյանը միշտ նշել է նաև իր նկատմամբ եղած հարձակումների ու հալածանքների մասին⁵⁴։ Այնուհետև, այդպիսի դիմում Աբովյանն իսկապես գրել է, բայց ի՞նչ պայմաններում, սա է կարևորը։

Վրաստանի կենտրոնական պատմական արխիվի նյութերը վկայում են, որ դեռ 1838 թ. վերջին, Անդրկովկասի կառավարչապետը գաղտնի տեղեկություններ է պահանջել ուսումնարանների դիրեկտորից՝ նրա վերատեսչության բոլոր ուսուցիչների մասին⁵⁵։ Թվում է, թե դրա առիթը Հեսսենմյուլլերի գործն է եղել։ Նույնանման պահանջ կառավարչապետի գրասենյակը կրկնել է նաև 1842 թ. մարտ և օգոստոս ամիսներին⁵⁶։ Եվ ահա 1842 թ. նոյեմբերի 23-ին ուսումնարանների դիրեկտոր Ռոսկովչենկոն, դարձյալ «գաղտնի» վերտառությամբ, կառավարչապետին է ներկայացնում պահանջվող համառոտ բնութագրերի ցուցակը, որտեղ միմիայն Աբովյանի անվան դիմաց է բացասական կարծիք տրված։ Այնտեղ գրված է. «Դերագանց բարոյականության տեր է, խիստ ջանասեր, հատկապես ուսուցչական պարտականությունների կատարման բնագավառում, սակայն որպես ուսումնարանի տեսուչ անբավարար է և ի վիճակի չէ իր տնօրինության տակ գտնվող ուսումնարանը բարձրացնել այն աստիճանի, որ օրինակելի դառնա Անդրկովկասյան երկրամասում»⁵⁷։

Դիրեկտորի այսպիսի բնութագիրն արդեն կանխորոշել է Աբովյանի հեռացումը Թիֆլիսից։ Եվ ուսումնական տարին ավարտվելուց անմիջապես հե-

52 Մանրամասնությունները տե՛ս մեր «Խ. Աբովյանը և ցարական գրաքննությունը» հոգվածում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1965, № 9, էջ 55—61։

53 Տե՛ս «Դիվան», հատ. 1, էջ 174, 176, 187, 219—221 և այլն։

54 Տե՛ս նույն տեղում, էջ 145 և այլն։

55 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 5979, թ. 2։

56 Տե՛ս նույն տեղում, թ. 7, 8։

57 Նույն տեղում, թ. 10։ «Դիվան», հատ. 1, էջ 94։

տո, 1843 թ. հունիսին, Աբովյանը «գլխավոր» է, որ իրեն նրան տեղափոխեն: Այդ դիմումի համաձայն դիրեկտորը նրան միևնույն պաշտոնով փոխադրել է նրան:

Այդ բոլորը, մեր կարծիքով, միայն գործի էությունը քաղաքակրթականություններ են եղել: Իր բնավորության հակառակ անփութ ու հապճեպ գրած Աբովյանի դիմումն ու նույն հապճեպությամբ դիրեկտորի տված հրամանը ոչ մի կապակց չեն թողնում, որ վերադաս իշխանությունների միակ մտահոգությունը եղել է Աբովյանին Թիֆլիսից հեռացնելը, հակառակ դեպքում նրանք կարող էին Աբովյանին պաշտոնից զրկել կամ իջեցնել ու թողնել նույն քաղաքում և ոչ թե միևնույն պաշտոնով նշանակել այլ քաղաքում: Հենց վերջին փաստը ինքնին ապացույց է, որ տեսչի պաշտոնում Աբովյանի անբավարարությունը պատրվակ է եղել միայն:

Թե որքան են իշխանությունները շահագրգռված եղել Աբովյանին Թիֆլիսից հեռացնելու գործում, վկայում է այն փաստը, որ դիրեկտորը մերժել է Աբովյանի խնդրանքը՝ ուսումնարանի հանձնումը հետաձգել մինչև սեպտեմբեր⁵⁸:

Այսպիսով, վերևում հիշատակված նորահայտ վավերագրերը ոչ միայն հնարավորություն են տալիս վերականգնել պատմական որոշ իրողություններ, այլև նորովի մեկնաբանել նրա Թիֆլիսյան շրջանի գործունեության մի շարք կողմերը:

К ВОПРОСУ О ТИФЛИССКОМ ПЕРИОДЕ ДЕЯТЕЛЬНОСТИ АБОВЯНА

В. Дж. ГАЗАРЯН

(Резюме)

В Тифлисе Абовян начал свою педагогическую и общественную деятельность, написал большинство своих произведений, в том числе и роман «Раны Армении».

Поэтому правильное освещение тифлисского периода жизни Абовяна получает принципиальное значение для оценки всей его деятельности.

В статье приведены новые материалы из Центрального Государственного архива СССР и Грузинской ССР, которые дают возможность новой трактовки тифлисского периода деятельности Абовяна.

⁵⁸ Տե՛ս «Դիվան», հատ. 1, էջ 95: